ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ
16 ապրիլի 2024 թվական

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4
ԵՐԵՎԱՆԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2-ՐԴ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ 3-ՐԴ ՆԻՍՏԻ

Նիստին մասնակցում էր Երևանի ավագանու 60 անդամ:

Նիստը վարում էր Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

Երևանի ավագանու նիստին հրավիրված էին Երևանի քաղաքապետի տեղակալներ՝ Լևոն Հովհաննիսյանը, Սուրեն Գրիգորյանը, Սարգիս Մադաթյանը, քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարի ժամանակավոր պաշտոնակատար Շավարշ Գրիգորյանը, քաղաքապետի խորհրդականներ՝ Կամո Արեյանը, Աշոտ Շահբազյանը, Անետա Բաբայանը, Պետրոս Պետոյանը, քաղաքապետի մամուլի քարտուղար Հայկ Կոստանյանը, քաղաքապետարանի աշխատակազմի կառուցվածքային ստորաբաժանումների ղեկավարները:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանի կողմից առաջարկվեց Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի հերթական նիստը գումարել 2024 թվականի մայիսի 14-ին, ժամը 10.00-ին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅՈՒՆ – Կողմ՝ 54, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց միաձայն:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Հայաստանի Հանրապետության կենտրոնական ընտրական հանձնաժողովի կողմից ներկայացված արձանագրությունների համաձայն՝ լիազորությունները վաղաժամկետ դադարած ավագանու անդամների մանդատները տրվել են Հանրային ձայն կուսակցության ընտրական ցուցակի հաջորդ թեկնածուներ՝ Գրիգոր Հարությունյանին և Ալբերտ Մովսեսյանին:

Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության կողմից 2024 թվականի մարտի 29-ին ներկայացրած տեղեկատվության համաձայն՝ խմբակցության ղեկավար է ընտրվել Գրիգորի Երիցյանը:

Երևանի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի օրակարգի վերաբերյալ ելույթներով հանդես եկան Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» և «Մայր Հայաստան» խմբակցությունների ղեկավարներ՝ Գրիգորի Երիցյանը և Մանուկ

Սուքիասյանը և առաջարկվեց նիստի օրակարգում ընդգրկված չզեկուցվող հարցերը քննարկել զեկուցվող հարցերի ընթացակարգին համապատասխան:

Ներկայացված առաջարկությունը դրվեց քվեարկության.

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 24, դեմ՝ 35, ձեռնպահ՝ 0

Առաջարկը չընդունվեց:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի օրակարգի նախագծում ընդգրկված 31-րդ՝ «ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» և 34-րդ՝ «Երևան քաղաքում փողոց անվանափոխելու մասին» ավագանու որոշումների նախագծերը հեղինակի՝ «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանի կողմից հանվում է օրակարգից:

Տիգրան Ավինյանը նշեց, որ գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից տրված եզրակացության համաձայն՝ չզեկուցվող 23-րդ՝ «Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին» և 24-րդ՝ «Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին» հարցերը հանում է օրակարգից:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ Երևանի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի օրակարգից հանում է նաև չզեկուցվող՝ 21-րդ «Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» իրավական ակտի նախագիծը:

Երևանի ավագանու 2024 թվականի ապրիլի 16-ի նիստի օրակարգի վերաբերյալ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար Արմեն Գալջյանը և առաջարկեց օրակարգից հանել զեկուցվող՝ հետևյալ նախագծերը.

1. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին:
2. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N1-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:
3. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
4. Երևան քաղաքի ավագանու որոշումը Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:
5. Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 33, դեմ՝ 15, ձեռնպահ՝ 0

Առաջարկն ընդունվեց ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը ներկայացրեց Երևանի ավագանու 2024 թվականի մարտի 12-ի նիստի օրակարգը.

1. Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:
2. Վալենտին Պոդպոմոգովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին: (Զեկուցվող)
3. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին: (Զեկուցվող)
5. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
6. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
8. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
9. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
10. Նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
11. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
12. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
13. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
14. «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանն անդամակցելուն համաձայնություն տրամադրելու մասին: (Զեկուցվող)
15. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
19. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին: (Զեկուցվող)
20. Գույքն որպես նվիրատվություն ընդունելու մասին: (Զեկուցվող)
21. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին: (Զեկուցվող)

22. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
23. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին: (Չզեկուցվող)
24. Անշարժ գույքերը որպես նվիրաբերություն ընդունելու մասին: (Զեկուցվող)
25. ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին: (Զեկուցվող)

1. ԼՍԵՑԻՆ – Երևանի ավագանու 2-րդ նստաշրջանի 3-րդ նիստի օրակարգը հաստատելու մասին:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 37, դեմ՝ 22, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը հայտնեց, որ հիմք ընդունելով Երևան քաղաքի ավագանու 18.06.2009թ. N1-Ն որոշման 71-րդ կետի 5-րդ ենթակետը՝ առաջնահերթ քվեարկության են դրվում օրակարգում ընդգրկված չզեկուցվող՝ 2-ից 23-րդ հարցերը:

Տ. Ավինյանը տեղեկացրեց, որ վերոնշյալ 2-23-րդ չզեկուցվող հարցերի վերաբերյալ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային հանձնաժողովների կողմից տրվել են դրական եզրակացություններ:

2. Վալենտին Պոդպոմոգովի հիշատակը հավերժացնող հուշատախտակի տեղադրման մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Տալ համաձայնություն անվանի ռեժիսոր, վաստակավոր նկարիչ Վալենտին Պոդպոմոգովի հիշատակը հավերժացնող հուշատախտակը Մաշտոցի պողոտայի 45 հասցեում փակցնելու համար:

3. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի N 106-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2019 թվականի հունիսի 17-ի «Երևանի աղբահանություն և սանիտարական մաքրում» համայնքային հիմնարկի կառուցվածքը, աշխատակիցների թվաքանակը, հաստիքացուցակը և պաշտոնային դրույքաչափերը հաստատելու մասին» N106-Ա որոշման հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

4. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի N 41-Ա որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի ավագանու 2023 թվականի դեկտեմբերի 26-ի «Երևանի քաղաքապետարանի և վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի կառուցվածքը, հաստիքացուցակը, աշխատակիցների թվաքանակը, Երևանի

քաղաքապետի, նրա տեղակալների, խորհրդականների, օգնականների, մամուլի քարտուղարի, քաղաքապետարանի աշխատակազմի աշխատակիցների, վարչական շրջանների ղեկավարների, ղեկավարների տեղակալների, վարչական շրջանի ղեկավարի աշխատակազմերի աշխատակիցների պաշտոնային դրույքաչափերը հաստատելու և Երևան քաղաքի ավագանու 2018 թվականի հոկտեմբերի 29-ի N10-Ա որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N41-Ա որոշման N2 հավելվածի «Առանձնացված ստորաբաժանումներ» բաժնի «Երևանի վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմեր» գլուխը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

5. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Քանաքեռ-Զեյթուն վարչական շրջանի Պ. Սևակ փողոց 5/1 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

6. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Արշակունյաց պողոտա 9/5 հասցեում արտադրական մասնաշենքը հասարակականի վերակառուցման և բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

7. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Բաղրամյան պողոտա 37 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

8. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 19/11 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

9. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Դավթաշեն վարչական շրջան Ձոր-1 թաղամաս 96, 98, 99, 100, 100/1 հասցեներում բազմաբնակարան բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

10. Նախատեսվող գործունեության իրականացմանը անհամաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 3/3 հասցեում բետոնի գործարանի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել անհամաձայնություն՝ հետևյալ պատճառաբանությամբ.

1) «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 11-րդ հոդվածի 9-րդ մասի համաձայն՝ արգելվում են տնտեսական կամ այլ գործունեության իրականացումը, ինչպես նաև նման գործունեություն իրականացնող օբյեկտների նախագծումն ու կառուցումը, եթե դրանք կարող են հանգեցնել մարդու առողջության վատթարացման, բույսերի և կենդանիների գենետիկ ֆոնդի ոչնչացման, մարդու և շրջակա բնական միջավայրի համար անդառնալի հետևանքների:

2) Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 3/3 հասցեում բետոնի գործարան կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ 2024 մարտի 25-ին ժամը 11:00-ին Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նստավայրում օրենքով սահմանված կարգով տեղի է ունեցել առաջին հանրային լսումը: Համայնքի կողմից ապահովվել է համայնքի ներկայացուցչի մասնակցությունը: Արաբկիր վարչական շրջանի Թբիլիսյան խճուղի 3/3 հասցեում բետոնի գործարան կառուցելու նախատեսվող գործունեության վերաբերյալ Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի աշխատակազմը ներկայացրել է բացասական կարծիք, նշելով որ՝

«Նշված վայրում արդեն իսկ գործում են երկու խոշոր շինարարական կազմակերպություններ՝ բետոնի գործարաններով, որոնք ունեն մեկ ճանապարհ դեպի Թբիլիսյան խճուղի: Ծանր մեքենաների երթևեկությունից քանդված է ամբողջ ճանապարհը և, քանի որ այն ռելիեֆային է, հնարավոր չէ առանց գլոբալ հիմնանորոգման խնդրին տալ վերջնական լուծում: Արտանետված և մեքենաների կողմից բարձրացված փոշուց չորացել են հարակից ծառերը և ընդհանրապես վերացել կանաչ գոտիները: Ընկերությունը, որը տվյալ վայրում ուզում է կառուցել նոր բետոնի գործարան, օգտվելու է նույն ճանապարհից, հետևաբար դրա կառուցմամբ էլ ավելի կվատթարանա ինչպես ճանապարհի, այնպես էլ բնապահպանական խնդիրները: Տվյալ պարագայում գտնում ենք, որ ոչ միայն չպետք է կառուցվի նոր բետոնի գործարան, այլև պետք է առաջնահերթ ուսումնասիրման և քննարկման առարկա դարձնել արդեն իսկ գործող շինարարական կազմակերպությունների կողմից առաջացրած բնապահպանական լուրջ խնդիրները»:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

11. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի Լենինգրադյան փողոց 5/4 հասցեում բազմաբնակարան բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

12. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի Սուրբ Գրիգոր Լուսավորչի փողոց 4 հողամաս հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի համալիրի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

13. Նախատեսվող գործունեության իրականացմանը նախնական համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի Հր. Քոչարի փողոց 139 հասցեում բազմաֆունկցիոնալ բնակելի շենքի կառուցման նախատեսվող գործունեության իրականացմանը տրամադրել նախնական համաձայնություն:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ սույն որոշումը, հանրային լսման արձանագրությունը, լուսանկարները կամ տեսաձայնագրությունն օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետներում տրամադրել լիազոր մարմնին և նախաձեռնողին:

14. «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանն անդամակցելուն համաձայնություն տրամադրելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Համաձայնություն տալ անդամակցելու «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպությանը:

2. Սահմանված կարգով Երևան համայնքի բյուջեում նախատեսել «Բնության պահպանության միջազգային միություն» միջազգային բնապահպանական կազմակերպության անդամության վճարը:

15. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ փողոցի հ.28 հասցեում գտնվող Յակոբ Այնթապլեանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.21112022-01-0154 վկայական) 0.20586հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել «բնակավայրերի» հողերի կատեգորիայի:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

16. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի, Ներքին Չարբախ թաղամասի հ.29 հասցեում գտնվող Վահագ Նիկողոսյանին սեփականության իրավունքով պատկանող 0.02195հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոխադրել բնակավայրերի հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասերի նպատակային նշանակությունների կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենը:

17. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ն.Չարբախ փողոցի հ.229 հասցեում գտնվող Հասմիկ Գրիգորյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18052022-01-0189 վկայական) 2097.0քմ մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել «բնակավայրերի»:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

18. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Ն.Ադոնցի փողոցի հ.18/1 հասցեում գտնվող «ՀԱՅԲՈՒՍԱԿ ԿԼԻՆԻԿԱ» ՍՊ ընկերությանը սեփականության իրավունքով պատկանող 0.41037հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում օրենսդրությամբ սահմանված կարգով տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

19. Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Երևան քաղաքի Շիրակի փողոցի հ.9 հասցեում գտնվող, Մարինե Վարդանյանին սեփականության իրավունքով պատկանող (անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.03032020-01-0262 վկայական, գաղտնաբառ՝ 1MBFGLC6MXQW) 0.0145հա մակերեսով հողամասի նպատակային նշանակությունը «արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության» հողերի կատեգորիայից փոխադրել «բնակավայրերի» հողերի կատեգորիա:

2. Երևանի քաղաքապետին՝ սույն որոշման 1-ին կետով հողամասի նպատակային նշանակության կատարված փոփոխության մասին 10-օրյա ժամկետում, օրենսդրությամբ սահմանված կարգով, տեղեկացնել Կադաստրի կոմիտե և Քաղաքաշինության կոմիտե՝ կցելով սույն որոշման սահմանված կարգով հաստատված պատճենները:

20. Գույքն որպես նվիրատվություն ընդունելու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Որպես նվիրատվություն ընդունել սեփականության իրավունքով «Գրիգոր Նարեկացի» բժշկական կենտրոն ՓԲ /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման վկայական հ.07032024-01-0305 վկայական/ ընկերությանը պատկանող Ազատամարտիկների պողոտայի հ.82/2 հասցեում գտնվող 4794.51քմ մակերեսով հողամասը և 7035.91քմ մակերեսով շինությունը:

2. Առաջարկել Երևանի քաղաքապետին՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել սույն որոշման կատարումը:

21. Ծառայողական ավտոկայանատեղ կազմակերպելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ սույն որոշման հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով կազմակերպել ծառայողական ավտոկայանատեղ:

22. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2024 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

23. Կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը շարունակելու իրավունք տալու մասին:

ՈՐՈՇՎԵՑ - 1. Թույլատրել սույն որոշման հավելվածում նշված անձանց՝ 2024 թվականի ընթացքում շարունակելու հավելվածում նշված տարածքներում և սահմանված պայմաններով նախորդ տարիներին կազմակերպված ծառայողական ավտոկայանատեղերի շահագործումը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 36, դեմ՝ 11, ձեռնպահ՝ 2

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ այժմ քննարկման է ներկայացվում 2024 թվականի ապրիլի 16-ի հերթական նիստի զեկուցվող հարցերը.

24. ԼՍԵՑԻՆ – Անշարժ գույքերը որպես նվիրաբերություն ընդունելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ քաղաքաշինության և հողօգտագործման հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «Անշարժ գույքերը որպես նվիրաբերություն ընդունելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վահան Խաչատրյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Իզաբելլա Աբգարյան – Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Դիանա Քերոբյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Արտակ Զեյնալյան – Երևանի ավագանու «Հանրապետություն» խմբակցության անդամ
4. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցերի վերաբերյալ պարզաբանումներ ներկայացրեցին Երևանի քաղաքապետ Տ. Ավինյանը, աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետ Վ. Խաչատրյանը և իրավաբանական վարչության պետ Տ. Մարգարյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 7 անդամ.

1. Պեդրո Զարոկյան-Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
2. Արթուր Իսպիրյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ
3. Արամ Թորոսյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
4. Մեսրոպ Մանուկյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ
5. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար
6. Հայկ Գրիգորյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ
7. Արմեն Գալջյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության ղեկավար

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Քրիստինա Վարդանյանը, «Մայր Հայաստան» խմբակցության անունից՝ Մանուկ Սուքիասյանը, «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անունից՝ Նուարդ Վարդանյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Որպես նվիրաբերություն ընդունել «Գաֆէսճեան թանգարան» հիմնադրամի սեփականությունը հանդիսացող Անտառային փողոցի հ.1 (0.04հա

հողամաս), Անտառային փողոցի հ.1ա (0.1953հա հողամաս), Անտառային փողոցի հ.13 (0.0313հա հողամաս), Անտառային փողոցի հ.139 (0.1հա հողամաս), Սարմենի փողոցի հ.19 (0.0563հա հողամաս), Ջրաշատ փողոցի հ.27 (0.0420հա հողամաս, 164.6քմ շինություն) և Սարմենի փողոցի հ.29 (0.0456հա հողամաս) հասցեներում գտնվող անշարժ գույքերը:

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 46, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 9

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

25. ԼՍԵՑԻՆ – ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին:

Երևանի քաղաքապետ Տիգրան Ավինյանը տեղեկացրեց, որ Երևանի քաղաքապետի կողմից նշանակած գլխադասային՝ իրավական հարցերի մշտական հանձնաժողովի կողմից «ՀՀ Երևան քաղաքի ավագանու որոշումը Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» նախագծի վերաբերյալ հանձնաժողովի կողմից տրվել է դրական եզրակացություն:

ԶԵԿՈՒՑԵՑ - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ՀԱՐՑԵՐԻ ՀԱՄԱՐ - Հարցեր ուղղելու համար գրանցվել են ավագանու 4 անդամ.

1. Մեսրոպ Մանուկյան – Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

Բարձրացված հարցի վերաբերյալ պարզաբանում ներկայացրեց Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը:

ԳՐԱՆՑՈՒՄ ԵԼՈՒՅԹՆԵՐԻ ՀԱՄԱՐ – Ելույթների համար գրանցվել են ավագանու 6 անդամ.

1.Պեդրո Զարոկյան- Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

2. Մանուկ Սուքիասյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության ղեկավար

3. Արման Բարխուդարյան – Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

4. Արամ Թորոսյան - Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ

5. Սամվել Հակոբյան - Երևանի ավագանու «Մայր Հայաստան» խմբակցության անդամ

6. Լուսինե Գևորգյան - Երևանի ավագանու «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության անդամ

Ղեկավարվելով Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշմամբ հաստատված հավելվածի 71-րդ կետի 13-րդ ենթակետով՝ Երևանի ավագանու «Մայր

Հայաստան» խմբակցության անունից չհերթագրված, արտահերթ մեկ ելույթով հանդես եկավ խմբակցության անդամ Մեսրոպ Մանուկյանը:

Արտահերթ ելույթով հանդես եկավ Երևանի քաղաքապետի տեղակալ Լևոն Հովհաննիսյանը:

Եզրափակիչ ելույթով հանդես եկավ Երևանի ավագանու «Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյանը:

ՈՐՈՇՎԵՑ – 1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի կանոնակարգը ընդունելու մասին» N 1-Ն որոշման հավելվածը լրացնել հետևյալ կետով.

«83.1. Երևանի բյուջեի կատարման վերահսկողությունն արդյունավետ իրականացնելու նպատակով՝ ընթացիկ տարվա ոչ ուշ, քան վերջին նիստում Ավագանին որոշում է կայացնում բյուջեի կատարման տարեկան հաշվետվության վերաբերյալ «Գնումների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով աուդիտ անցկացնելու մասին, որի համար վճարումը կատարվում է Երևանի բյուջեից:

Աուդիտ անցկացնելու նպատակով աուդիտորական կազմակերպություն ընտրելու մրցույթին կարող են մասնակցել այն անկախ աուդիտորական կազմակերպությունները, որոնք՝

ա. ունեն առնվազն 5 տարվա աշխատանքային փորձ աուդիտի ոլորտում,

բ. ունեն առնվազն 7 աշխատակից, ովքեր ունեն առնվազն 5 տարվա աուդիտորական աշխատանքային փորձ, և որոնցից առնվազն 2-ը ունեն միջազգային որևէ որակավորում:»

ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ – կողմ՝ 57, դեմ՝ 1, ձեռնպահ՝ 1

Որոշումն ընդունվել է ձայների մեծամասնությամբ:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ

Կազմեց՝
Ն. Ղուկասյան